

պատտակը սեպհականութիւն մնային ազնուական դասակարգին:

4. - Սպասք: — Ասոնք թէ թուով եւ թէ որակով պիտի զանազանէին հարկաւ ազնուականին ու ռամկին քով: Եղիշէի սա ճոխ բացատրութիւնը տիկնանց մասին՝ «սպասք երախանաց նոցա» (174), չպիտի կարենանք կրկնել հասարակ դասուն կամ կղերին համար: Միս. Գոշ իւրաքանչիւր դասակարգին համեմատ կը ճանաչէ Հայոց մէջ «անօթս ոսկեղէնս եւ արծաթեղէնս, փայտեղէնս եւ քարեղէնս եւ այլ այսպիսիս» որոց մէջ կերակուր կը դնէին (Առկ. 130): Աղուանից լուսաւորչածնունդ հայրապետին գերեզմանին մէջ գտուեցաւ «սպակի մի՛ նորին Գրիգորիսի ըմպելի» (Կաղ. 59). եւ Շիրակացւոյն մէկ վկայութեան մէջ կը պատահինք՝ «գինւոյ արկանելոյ յսպակիս» (Աւգ. 31): Մինչեւ հոս կը հասնի պարզ դասուն սպասուց ազնուութիւնը, ինչպէս Ոսկեբերան ալ սովորական կը համարի «յաղքատացն սեղան... բաժակս եւ զայլ ինչ անօթս յսպակեաց եւ կամ յեւս նուազագունեաց» (Թղթ. Ա, 529):

Սակայն հայ ազատանւոյն սեղանին վրայ պիտի կարենանք տեսնել աւելի ընտիրները, ինչպէս կը գուշակուի անոնց